

Handwritten text, possibly a signature or name, in cursive script.

891.99

2-85

891.99

7-85

այ.

ՀՈՎ.Հ. ՀՈՎ.ՀԱՆՆԻՍՅԱՆ

6 NOV 2011

Հ Ա Տ Ը Ն Տ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

73 № 2013

39450

1105 VOV-8



302
40





Յ Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Հովհ. Հովհաննիսյանը հայտնի դարձավ մի այնպիսի ժամանակ, յերբ բանաստեղծական սերնդի վրա առկալին իշխում էր Գամառ Քաթիպան, իսկ Շահազիզի յերգի թովչանքը չէր մոռացվել: Չնայած դրան, նա միանգամից հավասարի իրավունքով կանգնեց հայտնի հեղինակների շարքը:

Ինչո՞ւ. շատ ուրիշ բանաստեղծներ, վոր նույն տարիներին հաստատոր գրքեր էլին գրել ընթերցողի առաջ, առուղի նման փայլել ու անցել էլին, մնացել անանուն, անհիշատակ, իսկ Հովհաննիսյանի մի փոքրիկ գիրքը բավական յեղավ, վոր նա անմիջապես բանաստեղծ ճանաչվի, անուն ու հարավ հանի: Արդյո՞ք. միայն այն, վոր նրանք, ինչպես չեքպիրյան հերոսն է առում, ալիլի փայլ ունեցին, քան ջերմություն, իսկ Հովհաննիսյանը՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Իհարկե, վրչ:

Հովհաննիսյանի բանաստեղծությունների գրքույկը լույս տեսավ 1887-ին, այսինքն այն ժամանակ, յերբ հայ բանաստեղծությունը սերնդաբոխ էր լինում: ՅԵԹԷ Հովհաննիսյանը մի առանձնյակ ու հանդես դար, ասենք՝ 90-ական թվականներին, թեկուզ և ալիլի մեծ տաղանդով, նրա արժեքն ու նշանակությունն այն չէր լինի, ինչ է՛ն:

Հովհաննիսյանը սահմանադժեց նորը հնինց: Հովհաննիսյանը իբրև գրական յերևույթ րանաստեղծական նախորդ սերնդի՝ Գաթիպայի, Շահագիզի շարունակութունն է հակադրության մեջ: Սակայն հայ բանաստեղծության մեջ դարձակետ լինելով՝ նա վերջնականապես շայրեց այն բոլոր կամուրջները, վորոնք նրան կապում էին նախորդ սերնդի ավանդություններին: Այդպիսով, Հովհաննիսյանը դարձավ բանաստեղծական խոսքի անհաբիր ամբերի կամրջողը: Բայց այդ շխանգարեց նրան նոր շարժման դուրսը կանգնելու: Հովհաննիսյանը գրական սերունդ ստեղծեց. Ծառուբյանը, Թումանյանն ու Իսահակյանը նրա բանաստեղծական տոհմից են սերում: Թումանյանն ասում է, վոր ինքը պատկանում է հայ բանաստեղծության զարգացման այն շրջափուլին, վորն սկսվում է Հովհաննիսյանով: Իսահակյանն էլ մի նամակում ասում է, վոր ինքը խմել է Հովհաննիսյանի յերդերի վոսկեղեն աղբյուրից:

Ինչը Հովհաննիսյանին դարձրեց այդպիսի հրահանքի նախորդ. վորն է նրա բանաստեղծության գլխավոր արժանիքը. այն, վոր նա յեղավ նոր քնարական խոսքի առաջին վորոնմունքը: «Հովհաննիսյանը կարծես իրեն խնդրեր արագորդը ցույց տալ քնարերգության բոլոր ուղիները և տալ նրա նմուշները: Յերդ, ներբող, էլեղիս, պատմական առասպելի վերածակում, փիլիսոփայական խոհ, — քնարերգության այս և այլ հիմնական ձևերը սերով և փութով մշակել է Հովհաննիսյանը», — ասում է Վալերի Բրյուսովը բանաստեղծի պատմական ծառայությանը վկայելիս: Ինչպես նյութի, ժանրերի, այնպես էլ լեզվի տեսակետից Հովհաննիսյանը նոր յերևույթ եր հայ

բանաստեղծության մեջ: Հովհաննիսյանը մի ամբողջ գլխով րարձր կանգնեց իր նախորդներից. նա ստեղծեց մաքուր և կիրթ լեզու՝ մի միասնական վոճով: Բայց վոխանցման շրջանը դրոշմ դրեց նրա յերկերի վրա: Շատ բան նորելով, նա շատ բան էլ ստիպված յեղավ պահպանել այն վիճակում, ինչպես ստացել էր վաթսուամական բանաստեղծներից, հարցերի հետադա և առավել խոր լուծումը ժամանակագրության թողնելով իր հաջորդներին:

Հովհաննիսյանի յերգերի վոսկեղեն աղբյուրը, լավ է ասել Իսահակյանը, կարկաչեց հայոց հին ու նոր յերգերի սահմանադրում: Նա առաջինը քայլեց այն լավով, վոր ասպազայում գալիք բանաստեղծների բանուկ ճանապարհը պիտի դառնար: Հովհաննիսյանի «հատիկը» դտավ իր պարարտ հողը, ծել արձակեց, յեկավ մի ուրիշ «աշուղ» և ձեռը չուճուրից զարկելով՝ վորեց մանթաշի խաղերը — յերգն ու վերքը: Հովհաննիսյանի յերգերը սկունքը դարձան այն հորդուն դետերի, վոր «լսփին տարով» զնային թափվելու ծովը, ուր վոջ շատ հետո դեպի հեռուն ու անհունությունը հանդուզն լողընթացի պիտի յեկնեին Թումանյանը և Իսահակյանը: Հովհաննիսյանի հաջորդների մեծության մեջ ցոլաց նրա վաստակի պատմական նշանակությանը: Թումանյանն ու Իսահակյանը շարունակեցին Հովհաննիսյանի սկսածը: Բայց դա միայն բանաստեղծական հնարքների շփման հարց չէ, այլ հոգեկան մտերմության, մտածական հարազատության: Վորքան էլ տարբեր լինեն նրանք իրարից բնությանը և խառնվածքով, սանքը, Հովհաննիսյանը՝ մեղմ, Թումանյանը՝ վեհ ու խաղաղ, Իսահակյանը՝ անհանդիստ, հեղեղուն, միևնույն է, նրանց

Հովհաննիսյանը սահմանադժեց նորը Հնից: Հովհաննիսյանը իբրև գրական յերևույթ ՚րանաստեղծական նախորդ սերնդի՝ Գաթիկայի, Շահազիլի շարունակությունն և հակադրության մեջ: Սակայն հայ բանաստեղծության մեջ դարձակետ լինելով՝ նա վերջնականապես շայրեց այն բոլոր կամուրջները, վորոնք նրան կապում էին նախորդ սերնդի ավանդություններին: Այդպիսով, Հովհաննիսյանը դարձավ բանաստեղծական խոսքի անհատիկ ափերի կամջողը: Բայց այդ չխանգարեց նրան նոր շարժման գլուխը կանգնելու: Հովհաննիսյանը գրական սերունդ ստեղծեց: Ծատուրյանը, Թումանյանն ու Իսահակյանը նրա բանաստեղծական տոհմից են սերում: Թումանյանն ասում է, վոր ինքը պատկանում է հայ բանաստեղծության զարգացման այն շրջափուլին, վորն սկսվում է Հովհաննիսյանով: Իսահակյանն էլ մի նամակում ասում է, վոր ինքը խմել է Հովհաննիսյանի յերգերի վոսկեղեն աղբյուրից:

Ինչը Հովհաննիսյանին դարձրեց այդպիսի հրահանքի նախորդ. վո՞րն է նրա բանաստեղծության գլխավոր արժանիքը. այն, վոր նա յեղավ նոր քնարական խոսքի առաջին վորոնմունքը: «Հովհաննիսյանը կարծես իրեն խնդիր էր առաջադրել ցույց տալ քնարերգության բոլոր ուղիները և տալ նրա նմուշները: Յերդ, Ներբող, Ելեղիա, պատմական առասպելի վերածակում, փիլիսոփայական խոհ, — քնարերգության այս և այլ հիմնական ձևիքը սիրով և փութով մշակել և Հովհաննիսյանը», — ասում է Վալերի Բրյուսովը բանաստեղծի պատմական ծառայությունը վկայելիս: Ինչպես նյութի, ժանրերի, այնպես էլ լեզվի տակակետից Հովհաննիսյանը նոր յերևույթ էր հայ

բանաստեղծության մեջ: Հովհաննիսյանը մի ափրոզ էլիով բարձր կանգնեց իր նախորդներից. նա ստեղծեց մաքուր և կրթի լեզու՝ մի միասնական վոճով: Բայց վոխանցման շրջանը դրոշմ դրեց նրա յերկրի վրա: Շատ բան նորելով, նա շատ բան էլ ստիպված Եստով պահպանել այն վիճակում, ինչպես ստացել էր վաթսուներկան բանաստեղծներից, հարցերի հետագա և առավել խոր լուծումը ժամանակագրության թողնելով իր հանրությունը:

Հովհաննիսյանի յերգերի վոսկեղեն աղբյուրը, լավ է ասել Իսահակյանը, կարկանդակ հայոց հին ու նոր յերգերի սահմանադրում: Նա առաջինը քայլեց այն շավղով, վոր ապագայում զավիք բանաստեղծների բանուկ ճանապարհը պիտի դառնար: Հովհաննիսյանի «Հատիկը» դուռով իր պարզ հոգը, ծիւղ արձակեց, յեկավ մի ուրիշ «աչուղ» և ձեռը չունդուրին գարկելով՝ յերգեց մանթաշի խաղերը — յերգն ու վերքը: Հովհաննիսյանի յերգերը ակունքը դարձան այն հորդուն գետերի, վոր «լափին տալով» գնացին թափվելու ծովը, ուր վոճ շատ հետո դեպի հեռուն ու անհունությունը հանդուրն լողնեթացի պիտի յեկնեին Թումանյանը և Իսահակյանը: Հովհաննիսյանի հանրությունը մեծության մեջ ցույց նրա վաստակի պատմական նշանակութունը: Թումանյանն ու Իսահակյանը շարունակեցին Հովհաննիսյանի սկսածը: Բայց դա միայն բանաստեղծական հնարքների չիման հարց է, այլ հոգեկան մտերմության, մտածական հարազատության: Վորքան էլ տարբեր լինեն նրանք իրարից՝ բնությամբ և խառնվածքով, ստեղծ, Հովհաննիսյանը՝ մեղմ, Թումանյանը՝ վեհ ու խաղաղ, Իսահակյանը՝ անհանդիսա, հեղեղուն, միկնույն է, նրանց

միացնողը հանրային մտայնութեան ընդհանրութեանն է, ժողովրդի հետ ունեցած խոր կապը:

Ազգային ազատագրական հուշերի կործանումը 80-ական թ. մի խոր լքում էր սուղ լինել: Ամենքը միքնոված հուսախարութեան մեջ «արտի կտոր» էլին ուզում լսել: Հովհաննիսյանն իրեն զրահան յերևույթ այդ պահանջի արձայանքն էր: Հովհաննիսյանը խոսեց մի նոր և անձանոթ ձայնով: Այդ ձայնը գալիս էր մարդու հոգու խորքերից, հույզերի անտես աշխարհից: Մինչև Հովհաննիսյանը հայ բանաստեղծութունը «ամաչում էր զպայմունք հայտնելուց, աշխատում էր ամեն տեղ լինել խելոք, խորհող, մտածող զպայմունքն զպողո, զգայականութեան սանձող»: Կասկած, հուսահատութեան, կարոտ, յերազ, ձգտում, հույս, մի խոսքով՝ ներաշխարհի տարածերթ զպայմունքներն ու մտքերը դասն իրենց արտացոլումը Հովհաննիսյանի բանաստեղծութեան մեջ: Բանաստեղծի զգացումները խոն են ու, յերբեմն էլ, հակասական: Հակասութեանների մի ամբողջութեան մեջ հայտնութեան են գտնում բանաստեղծի վայելչասիրութեանը և մարդասիրութեան փշոտ ճանապարհը, բայց՝ զազափարենքը: Կյանքի գտնն իսկույթունը բմբուխն անձանոթն անհանձնելի մի նոր ճշմարտութեամբ է հնչում հնազարդյան խոսքը— Beati possidentes յերջանիկ են տիրողները: Հուսախար յերգիչը տեսնում է, վրբ մարդկանց խիջը կաշառված է, անկեղծութեանը վաճառված, իսկ մարդկանց, Տալեյրանի խոսքերով ասած՝ լեզու յե տրված, վրբ լռեն, թաղցնեն իրենց միտքը, զպայմունքը: Բանաստեղծը տեսնում է, վրբ մարդը շղթա յե կռում էր նմանին կապանքի մեջ պահելու համար, վրբ նա զրկում է իր նմանին վա-

յելքից, այն բարեքնեքից, վրբնց ստեղծագործ հեղինակն է նա, իսկ յերբ մեկը վրբում է թիվ տալ էր հոգուն, թռիչք՝ փայլալուստ անհանգիստ, մի անսելի ուժով բունութեան մուրճն իջնում է նրա գլխին, բաժին հանելով ծանր, անխաճան տառապանքը: Ահա այստեղից էլ բանաստեղծի անհաղուրդ ձգտումը զեպի դյուխանքը, զեպի յերական աշխարհը:

Հովհաննիսյանի յերգը խոսեց հայրենիքի ցավերից մնացած հոգիների հետ: Ազգային վշտի հետ հրուշեց քնքուշ սիրու լուս խոստովանանքը: Բանաստեղծի յերգերի մեջ ընթերցողը գտավ սիրու դյուխանքն աշխարհը, զպայ յերազանքի վրդ ճամբար: Թախիծն ու մեղմութեանը ճանապարհ գտան զեպի մարդկանց հոգիները: Այլևս խոսված հոգու տրամութեանն էր իշխում յերգի վրա:

Բանաստեղծը պատմութեան ընդերքից դուրս քաշեց հեռավոր անցյալում, անհիշատակ ժամանակներում ժողովրդի ստեղծած ամանդավեպերը:

Այս զրվածքներում, լինի այն բալլազ, թե էլ վրբ, հայց լեզվի ճոխութեանը հնչում է մի առանձին վեմնութեամբ, դասական խոստովանում, իսկ յուրաքանչյուր շեշտն իջնում է կոանի ուժգնութեամբ: Ակամա հիշում էս հին ու մեծ գանգերի ծանր, հանգիստվոր զգանքը:

Հովհաննիսյանը շատ չի գրել: Բայց նրա յերգները հայ ազգային բանաստեղծութեան լեռնոտ ճանապարհի վրա ընկած սուղին կածանները լինելով, անզուգական կատարելութեան դասական որինակներն չարունակում մնալ մինչև այսօր: Հովհաննիսյանի «ժլատ» զրջի տակից դուրս են յեկել այնպիսի սողեր, վրբնք, լավ է ամլած. իբր իսկական զոհարներ կշողոզան և գերագույն հրձվանքով

կյցնեն ընտիր հողիները այնքան ժամանակ, վորքան ժամանակ Արազը կդա լափին տալով, իսկ Ալադայաղի բարձր կատարին ձյունն կկիտվի...

Հովհաննիսյանի (ինչպես թումանյանի և Իսահակյանի, հետագայում ել Տերյանի) բանաստեղծությունը մի հայելի յեղավ, վոր արտացոլեց ժողովրդական զանգվածներին՝ դյուրացիության, արհեստավորական խավերի, հալածական մտավորականության ձգտումը դեպի լավը, դեպի բարին ու զեղեցիկը։ Նրանց շարժումը դեպի հեղափոխությունը, նրանց մարդկային—ազգային արժանագատությունը զարթոնքը, բողոքն ու վարանումը, խռովությունն ու ընդվզումը, մի խոսքով՝ շարժումն իր տարբեր, հազար ու մի ճամբերով։ Պոսմեթեվայան ծառացում ու զրիստոնեական քարոզ, խռովություն ու հնազանդություն — ահա Հովհաննիսյանի բանաստեղծությունը, ուր համերաշխության հովանու տակ խաղաղ հանդչում և մի կողմից՝ աղատ մտքի ընդոստ խոսանքը, մյուս կողմից՝ հնավանդ բարոյախոսը։ Բայց յերբ հուսահատության մեջ չխեղդվեց բանաստեղծի հավատը, նա հասարակական չարիքին հակադրեց անձնադուհ սերը, յեղբայրության և համերաշխության քարոզը։ Բանաստեղծն սպասում եր այն որվան, յերբ կդա «մեծ ու անլախճան սերը» համերաշխություն բերելու մարդկանց։ Նրա բոլոր յերգերում, լինի այն մաքառումի զայրույթ, թե անհուն մորմոքի հուսահատուր աղբս, ճառագում է նուստ չողը։ Անսահման հավատը աչքում՝ նա միշտ յերագել և այն որը, յերբ մի մշտավառ կանթեղ կբոցավառի Արագածի կատարը։

Ամեն անգամ, յերբ վերջալույս ծիրանի Հանդչում և մեղմ Արագածի կատարին,

Յեվ դերդ մանկան պայծառ աչքը դեղանի Աստղերն յերկնից վալլ են տալիս կամարին, նայում եմ յես և սպասում, վոր վառվի Մի այլ ճրագ ծերուկ լեռան ճակատին։

Ժողովուրդն իր սեփական ձեռներով վառեց յերջանկության կանթեղը։ Բանաստեղծը վկա յեղավ այդ յերջանիկ պահին, ապրեց նրա առաջին բերկրանքը։ Բանաստեղծը համոզվեց, վոր հուր հավիտյան անշեջ պիտի մնա ժողովրդի վառած «լուստ ջահը նվիրական»։ Յեվ վոչ մի հանցավոր ձեռ չի հանդգնի հանդցնել, վորովհետև բյուր հազարների ձեռով և վառված այն, վորովհետև այնտեղ բոցկլտում են ազատության կուլում ընկած նահատակների հավերժ անմահ հողիները։

Թուրքն Զարյահ

3. IX 39. Յերբան

Հ Ա Տ Ը Ն Տ Ի Ր

Ա Շ ՈՒ Ղ

Ասի՛ աշո՛ւղ, ա՛ն չունգուրըղ, մեզ բան ասա՛
սրտալի՛.
Կարոտ եմք քու անուշ ձենին, մի բան ասա՛
սրտալի՛.
Սրտի խոսք եմք ուզում քեզնից, վոր վեր հանի
մեր հոգին—
Ա՛ն չունգուրըղ, դարդո՛ւտ աշուղ, մեզ բան ասա՛
սրտալի՛:

Գիտեմք, վոր դու միշտ տանջվում ես հագար ու
մի ցավերով,
Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով.
Չես լվանա եղ խոցերը արտասուցի ծովերով...
Ա՛ն չունգուրըղ, ցավո՛ւտ աշուղ, մեզ բան ասա՛
վշտալի՛:

Լուռ մընալով մեր վերքերին դու չես անի դեղ
դարման.
Արար-աշխարհք գիտի՛ չըկա մեր դարդերին չափ,
սահման,
Մեջուրքունն ել նըշան հս չի՞ մի գովելի
հատկուրքյան—
Ա՛ն չունգուրըղ, մեզ բան ասա՛, քոդ խոսքըդ
ընի ցավալի՛:

Եդպես խոսքեր շատ ենք լսել, ել կըլսենք
անտրբտունջ,
Մեր չխոսկան ըլնելուցն ե՛ մնացել ենք
անտերունջ,
Լավ ե՛ ազատ լաց ըլնիլը, քանց դարդ տանիլն
անմուննջ,
Ասա՛ լսենք, ի՞նչ անենք, վոր խոսքը կըլնի
վողբալի:

Տեսնում ես, վոր մենք քմբած ենք, քունն անուշ
ե՛ մեզ քըվում.
Ե՞ր ես դու ել մեզ բոլորիս մաշող քընիցն
հաղքըվում.
Ա՛ն չունգուրըդ, տո՛ւր լարերիկն, կըրակ վառի՛ր
մեր սրտում,
Մեզ ամենիս նոր շունջ տվող մի բան ասա՛
սրտալի:

1887

Ո՛վ իմ խղճուկ կյանք, խառնուրդ սակալի
Մանուկ հավատո, չար յերկբայութեան,
Անուշ պատրանաց, խոկմանց վշտալի,
Յե՛վ հստակ սիրո, հ՛ ստելութեան.
Խաղալիք ես դու նենգավոր բաղդի.
Հողմավար նավակ արեծուփ ծովում,
Անհանգիստ քոչնակ մի վտարանդի,
Պարգամիտ տղա փորձութեան բովում...

Վորպես խռովահույզ լեռնային վտակ
Գլորվում ես առաջ արագ, անդադար.
Ալիքդ անհամբեր քերթով հստակ՝
Վողբում են, իբրև պանդուխտ վշտահար:
Վե՛զ չեն կանգնեցնում քո դուրս արհար,
Վոր սիրով գրկած սահանքդ արեկոծ,
Անուշ հանգստեան կարդում են հրավեր,
Կանչում են գարնան սիրուն ծաղկանց ծոց:
Յե՛վ յես կանգած եմ սհա բընութեան
Հրաշայաց առաջ, մոլորված մտքով.
Չե՛, ինձ համար չեն այս գեղեցկութեան
Բուրբ հրապույրներ իրենց պատրանքով...
Հոգիս լի ցավով՝ նայում եմ միայն
Թե՛ ո՛ւր եմ քոչում սրբութեան արեկ,
Յե՛վ գեթ պիտի տա՞ն ինձ մի պատասխան
Սըլացող կյանքիս կոհակներ գալիք:
1889

Կուզեյի լինել կարկաչուն վտակ,
վնիս ալիքը դրախտի բուրմունքով,
Յե՛վ առավոտյանն, ինչպես ցող հստակ,
Յերեսդ վոռոզել գոհար շիքերով:

Կուզեյի լինել սուսի հովասուն,
Համարձակ փոված կանաչ սաղարք
Յե՛վ միջոքեյին այդ դեմքիդ սիրուն
Հովանի լինել հեզիկ շրշյունով:

Կուզեյի լինել ծաղկոցում բացված
Քաղցրաբույր մի վարդ, յերկնից արժանի,
Յե՛վ սիրո ժամին, յանդիցս արբած,
Զարդարանք լինել կուրծքիդ գեղանի:

Յե՛վ շող դառնալով գարնան արևի՝
Կուզեյի պայծառ աչերումդ վառվել,
Կամ ինչպես ֆնֆուշ վոսկեվառ գոտի
Զֆնաղ իրանիդ փաքաքովել, փարել:

Լուսափայլ աստղիկ կուզեյի դառնալ,
Քաղցր մանկան պես ծիծաղն յերեսին,
Ինչպես աղամանդ շողշողել, ցուլալ,
Ո՛վ ի՛մ քագուհի, քո բաց նակատին:

Կուզեյի լինել լուսին ամառլսած,
Արծաքի փայլով մագերդդ շոյել,
Այտերդդ գգվել, սիրուց բորբոքված,
Դողդոջ շրքունքիդ համբույրներ դրոշմել:

Կուզեյի լինել սիրահար սոխակ
Յե՛վ ճեռիդ գերի, վանդակում փակված,
Ականջիդ հնչել հրաշալի նրվագ,
Մեղմ դրոք ասել քո հոգուն գմայլված:

Յե՛վ կախարդական տանարում կանգնած
Կուզեյի տեսնել յես քեզ Անահիտ,
Յե՛վ յերկրպագել, առաջիդ չոքած,
Սուրբ գեղեցկուրքյան անմահ սիպարիդ:

1888

304



Վարպես հաղթանդամ մի ծերունկ հսկա
կայսկած է ժայռը ջրերի վրա.
Ալիքը կայտառ գնում են գալիս
Յեվ ժայռին սիրո համբույր են տալիս:

Խաղում են անհոգ ալիքը գետի,
Յուցնում են գրկած պատկերն արեվի,
Յեվ, վարպես մանուկ ժպիտն յերեսին.
Մեղմիկ շշուկով խոսում են ժայռին:

«Լսի՛ր, ծերունի՛, ինչո՞ւ մակատիդ
Սեվ կնճիռները չեն տալիս դեմքիդ
Մի որ խնդուրյան շողով ցոլանալ—
Վաղը փոխվում է, դու նույնն ես դարձյալ:

«Ազատ լեռների ազատ գավակներ,
Մենք քեզ բերել ենք անքիվ գոհարներ.
Յերկնփի դատեր.— վարդի լեռնասուն
Կը ցողենք կուրծքիդ անուշաուրբյուն:

«Մենք յերանավետ քննուշ նվազով
Կը կոչենք խորքից ձկներն յերամով
Յեվ վոսկեգծված գարնան արեվից
Քեզ մեր զվարք պարին կանենք խնդակից:

«Յեվ քո ականջին միշտ սիրո յերգեր
Մենք արշալույսից կանենք մինչ աստղեր,
Յեվ քեզ կը փարենք և քո ծեր կուրծքին
Մենք հանգչել կըտանք մեր քաղցր կրփին...»

Ալիքը կայտառ գնում են գալիս,
Սեվ ժայռը նախկին յուր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաչում—
Նա կրկին անշարժ, նա կրկին տրտում...

1884

ԱՎԱՐԱԿ

Վորպես վաղեմի մի ավանդուք յուն
կամ շքեղ յերագ անմեղ մանկուք յան,
կենդանանում է այստր իմ մտքում
երոխտ ավերակն նայնյաց մեծուք յան:
Այստեղ բեկորներ վսեմ արվեստի,
Այնտեղ հիշատակն արքունի փառաց,
Յե՛վ վկայարան սրբագան ուխտի,
Յե՛վ տխուր հետքը մեծաշուք կենաց...

Վո՛հ, այսպես վողջ մեր կյանքն է վաղանցիկ,
Վողջը լույ ծաղր է անսիրտ բնուք յան:
Յե՛վ սեր, և հրնվանք, համայն գեղեցիկ
Զոհ է ավերի և մոռացուք յան:
Ինչպես պատրանքը հեշտասիրուք յան,
Ինչպես գրգիռը պատանու արյան,
Խարուսիկ ժպիտն աշնան արևու,—
Բուր՛րը վաղն է անհետանալու:

1884



Ա՛խ, տվե՛ք, ինձ քաղցրը մի քուն,
Կյանքից հեռո՛ւ սրլանամ
Այն աշխարհը, ուր խնդուք յուն,
Ուր սերն է միշտ անբառամ:

Բնֆուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բույրը զըվարքագին
Ծծեմ անվերջ յես անհագ:

Յե՛վ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխոջե,
Մի քարմուք յուն յեղեմային
Զարս բուրբէս տարածե:

Յե՛վ ինձ ժպտի արշալուսին
Գարնան մատաղ արեգակ,
Յե՛վ գիշերով իմ քակտոսին
Խաղա գողտրիկ վառ լուսնակ:

Յե՛վ աչագեղ կույսն ականջիս
Յուր մեղեդին մեղմ հնչե,
Յե՛վ հերարձակ՝ սիրով վըզիս
Փարե քնֆուշ, փաղաֆշե...

Յե՛վ հավիտյան վայելչություն
Գրկե՛ հոգիս, չհագեմամ...
Ա՛յս, տվե՛ք ինձ քաղցրը մի՛ քուն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ սըլանամ:

1884



Գեղեցիկ որեր, ծաղկավա՛ն որեր,
Իմ ցնորամիտ պատանեկության,
Գիտե՛մ, վոր շուտով չարագոյժ ամպե՛ր
Կը պատեն յերկինքն իմ սիրուն գարնան.
Գիտե՛մ՝ վոր արե՛վն, վոր հիմա պայծառ
Ծիծաղում է ինձ, պատի՛ր հույսերով
Լսկ խոստանում է իմ կյանքի համար
Ծաղիկ բուսցընել վոսկե շողերով:

Յե՛վ այն բոլորը, ինչ ինքնահավան
Ստեղծում է միա՛բն վառված բոբբոբված,
Զբժանալու յե շուտ ծուխի նըման.
Յե՛վ այն պատկերը սիրած փայփայած,
Վոր միտիբարն է ամայի կյանքիս,
Գիտե՛մ՝ պիտ ցնդի, ինչպես մի յերազ
Հուզված ուղեղի, վոր ցույց է տալիս
Յերբեմն անբաղդին մի վիճակ անհաս:

Բայց դարձյալ քա՛ղցր եք, գեղեցի՛կ որեր,
Ընտանի՛ սրտիս... Ո՞վ գիտե, հետո
Իմ տանջված հոգին ի՛նչ նոր-նոր ցավեր
Գեռ պիտի տեսնե. ծաղիկը սիրո,
Վոր հիմա քռչնած մի հիվանդ ժպտով
Գեռ նայում է ինձ, արդյո՞ք բընավին
Պիտի չըմեննի՞... Գուցե և շուտով
Լսու փոքորիկը նայքի իմ գլխին:

Լուրորդի նըման յես ծովն եմ ընկնում—
Արդյո՞ք մյուս ափն ինձ պիտի հանե՞ն
Գոռ ալիքները... զինվորը կովում
Գիտե՞ իբանցից ո՛ւյժ պիտի ապրեն...
Գոմն դեռ շքեղ յերազներ հիմա
Ազնիվ վայելքի բերում եմ ժամեր.
Ա՛յս, որհնյա՛լ լինի՛ք, ձեզ չեմ մոռանա,
Գեղեցի՛կ որեր, ծաղկավա՛ռ որեր:

1886

ՍՅՈՒՆՅԱՅ ԻՇԵԱՆԸ

«... և նա ըստ առաջին կարգի
օրինացն արբուների արկանէր զպա-
տուական հանգերձն զոր ունէր 'ի
թագաորէն... և զամենայն օրէնս
պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր
յարբունիս շլեղ և երևելի քան զա-
մենեսեան երևէր բազմութեանն»:

Եղիշէ, Յեղանակ է:

Արյան փայլով, տանջանքներով անահացած,
Ինչպես ցընորք յերևում եմ որերն անցած.
Յես չեմ կարող նոցա նայել լուռ պարծանքով,
Այլ մի խորին ցավակցութեան ըզգացմունքով.—
Ի՞նչ մեզ քողին մեր քաջարի գոված նախնիք.
Լացի՛, վոզի՛ անփառունակ մի հայրենիք...
Յե՛կ անձրեք ծաղկապսակ վառ փունջերի,
Վոր մանկական բերկրութիւնով անմիտների
Առանցին եմք մեմք տարածում, յես մի նըշան
Համարում եմ մեր փոքր հոգու ազատութեան.
Շղթան սիրող ըստրուկների մի բազմութիւն—
Ահա նոցա քողած անփառք ժառանգութիւն...

Բայց այդ անցյալի խորին խավարից,
Ահա առնում ե հոգուսն հարութիւն
Նա, վոր մերժված ե բոլոր աշխարհից,
Վորի հիշատակն հանդիմանութիւն
Լքսել ե միայն: Բայց անեծքների
Անվերջ կարկուտը ինձ չե շփոթում.

Ան դրոշմի տակից մաշված նակատի՝
Յես նորա այրող տանջանքն եմ տեսնում:

Ահա նա մեռակ, առանց հաշտութեան
Արտատուների, առանց կարեկից
Մի սիրող սրտի մխիթարութեան,
Հետու աշխարհի փարքամ խնջույքից,
Ընկած է բանտի խոնավ անկյունում
Գրելույն այեգարդ կուրծքին խնամահած,
Հուսահատութեան խորտակված սրտում
Յեկ հուրը գոչման խեղդող արտասուց...
Ընկած է մեռակ, և խուլ տանջանքով
Նա յուր վոնիրը, անկումն է վողորում
Յեկ հիշողութեան քույրը նոր ուժով,
Ինչպես շեկ յերկար, ուղեղն է այրում...

«Հեռու աչքիցըս, տաղտուկ տեսիլներ,
Ծերունի կուրծքըս դրժոյթ դարձրիք.
Հեռու աչքիցըս, արյունոտ սուտեր,
Յեկ դու, անողորմ, քշվա՛ն հայրենիք:
Վո՛հ, յես յերջանիկ պիտի լինեյի,
Թե՛ ձեր անեծքը քափեք իմ գլխին
Ահեղ դաշտումը մահատիք կովի,
Պղտոր Տղմուտի չարագույժ ափին...
Իսկ այժմ անջատված արևի շողից՝
Հեծում եմ մեռակ բանտումըս խավար,
Գործած հանցանքըս,— ըստվեր քունալից,
Մի ոճ է խայքող իմ հոգու համար...

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, մի՞քեք այլոց պես
Քեզ, ի՛մ հայրենիք, չըսիրեց վասակ,
Մի՞քեք էեզ համար սիրտըս աղեկեզ
Պիտի գոհվելու չլինեք ընդունակ...

Վո՛չ, վո՛չ. յես մի խեղճ, անըրշան հնի,
Արժանի ել չեմ լինել քո վտտփին
Կոխելու հողը... անե՛ծք դարերի,
Յես որինակ եմ գալոց սերունդին
Իրը չարագործ, վորից գրառատ
Յերկինքն էլ արդեն դարձրել է յերես:
Բայց դու, հայրենի՛ք, ինչո՞ւ յես վըհատ,
Մի՞քեք կարող ե չար չազկերտը էեզ
Ճուտի պես խեղդել յուր մագիլներում,
Ինչպես մի ուրուր... Գու, քաղից զըրկված,
Մի՞քեք մոռացար փտտքըս անցյալում,
Վո՛ պըսակալոր արի իշխանաց...

Ա՛յս, անցյալ որերն անմե՛ղ շքջանում...
Այն ի՛նչ յերջանիկ, քաղցր որեր եյին,
Մի հանդարտ լուտով ճըրագն եք վատվում,
Շուրջըս սիրական վորդիք, ամուսին...
Վո՛հ, հեռու, սիրուն, քշվա՛ն զավակներ,
Ձեր հայրը մեռավ... Ի՞նչ հայր, յե՞ս միքեք.
Հեռու ինձանից. ձեր հայրն իշխան եք...
Հեռու ինձանից. ձեր հայրն իշխան եք...
Դեռ լայն է բանտըս...

— Նո՛հա վատավոյ

Պայագատեցին անուն, հիշատակ,
Նո՛հա՛ էեզ բերին մահվան այս սև որ
Յեկ բոլորեցին տանջանքի պըսակ
Ալեոր գլխիդ, և դու մոռացա՛ր,
Իմ խե՛ղճ հայրենիք, արյան պալատներ,
Անտակութեան խայտառակ տանար
Յեկ արեհապիղծ շամբըս գիշերներ...
Այդ քո քագագարդ պետերը չեյի՞ն:
Յեկ դու, ուժասպա՛ն, վիրավո՛ր յեղևի,

Ի՞նչպէս կամեցար պարսիկ առյուծին
կռնիվ յեղանել... Անբա՛ղդ հայրենիք,
Արյունդ հոսում էր հեղեղի նըման,—
Դու նոր վերքերով մի՞՞ք ե հարուբյուն
կամեցար առնել... յերեսիդ վըբան
Դեռ չէր ցամաքել արտասվաց առուն—
Մի ժըպիրի նակատ դու գոռ վըտանգիւն
Յույց տվիր անահ: Յեվ ի՞նչ. փոխանակ
Որոր ասելու նիրհող գագանին,
Սոսկալի մարտի գարկեցիր կոչնակ...

Յեվ քո քաջերը շուտ հավաքվեցան,
Ինչպէս փերակի շուրջը մեղուններ,
Մահ տալ, մահ առնել նոքա յերդվեցան,
Լինել վողջակեզ բոյորանըվեր
Սուրբ ազատութեան սեղանի վըբա:
Յեվ յես... վա՛հ, քո՛ղ ինձ, չա՛ր Կիշողություն...—
Յես ել մտերիմ քեզ հանդես յելա
Կովին բերելու վոզևորություն.
Սուր սըլաք, շանքեր քշնամու գլխին
Շաղ տալ աներկյառ մըտածում եյի,
Յես կյանքը փրկանք փառքիդ սուրբ որին
Արդե՛ն ցընորված համարում եյի:
Յեվ հասավ ծամը,— քնդաց Ավարայր,
Հայոց զննքերի լըսեց շառաչյուն.
Սպարե՛զ յելանք այնտեղ քեզ համար,
Աշխարհ սիրական, քափել հորդ արյուն...

— Բայց ի՞նչ եմ տեսնում. այդ մի՞՞ք ե դուք եք,
Անգին գավակներ... Ա՛յ, ծածկե՛ք շուտով
Այդ կուրծքը պատած. մի՛ մերկացրե՛ք
Մատաղ գլուխներդ ներկված արյունով...
Կուրացե՛ք, աչե՛ր. հանդիմանութեան

Այն հուրը չտեսնեմ նոցա աչքերում,
Այն էր, վոք վատեց կայծակի նըման
Չարատանց հոգիս գոռ մարտի դաշտում...

Ի՞նչ... ի՞նչ եք ուզում, վասակը ձեզ հա՞յր...
Հեռո՛ւ ինձանից, քշվա՛ռ ուրուններ...—
Ահա՛ քշնամին հասավ զինավառ,
Պատյանի մե՞ջ եմ դեռ ձեր սուսերներ.
Հառա՛ջ դեպի մահ, փառավո՛ր որհաս—
Ահա մեր նըվեր քեզ, մա՛յր հայրենիք,
Թող մեր վորդիքը կրկնեն հանապազ,
Վոր վիճակեցինք մենք մահ յերջանիկ...

Նշավակութեան բանտի անկյունում,
Հուսահատութեան ստապանքներում.
Ո՞վ է՛ այդ մահը արդո՞ք ժառանգում,
Յես՞ — դավանանի անարգ պըսակով...
Առանց սիրելյաց արտասուքների,
Առանց աշխարհի, յերկնից հաշտութեան...
Ա՛յ, հանգիստ քող ինձ, տեսի՛լ սոսկալի,
Չե՛ ներումն յերբեք բաժին մատուցեցան...

Յեվ դու, հայրենի՛ք, լսում եմ արդեն,
Կարդում ես սհեղ քո դատավերում.
Շըքունքը ինձ միշտ պիտի նըզովեն—
«Վասա՛կ, այս ի՞նչ էր վոր գլխիս բերիք»...
Ահա կենդանի դու մի կշտամբանք
Կանգնած առաջիս, պըսակը փետած.—
Յես—ապուշ մատնիչ, բաժինըս—տանջանք,
Այս գերեզմանում հավիտյան փակված:
— Ո՞վ մատնիչ... վասա՛կ... շարժվեցե՛ք, պատե՛ր,
Տե՛ղ, կարկուտ, մըրի՛կ, գարկեցե՛ք գլխիս.

Դու, հավատարի՛մ պողպատ, իմ ընկե՛ր,
Կուրծ՛քս պատտախի՛ր—արյունը սրտիս
Թող սև հեղեղով հեք՛քս լըվանա,
Հակատիս դրնե անեծ՛փի կընի՛ք,
Թող դարեր անցնեն, աշխարհն իմանա—
Սնա՛րգ վասակը մատնեց հայրենի՛ք»...

1887

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛՛»:

Տեսե՞լ ես արդյո՞ք այն բլուրները,
Ուր նոյ ծաղկում է մշտական գարուն,
Կանաչում քաղված այն այգիները,
Ուր իբրե՛վ գոհար խաղողն է հասնում:

Տեսե՞լ ես դաշտեր, մարգագետիններ,
Ու բացված այնտեղ վառ շուշան, մելսակ,
Շնորհատու արև, վոսկի նըշույլներ
Յե՛վ միշտ սիրաշունչ յերկինք կապուտակ:

Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով
Կատղած անցնելիս գետը փրփրած,
Ականջ դրե՞լ ես խրոզված հոգով
Այն աղմկայից գոռոցին ալյաց:

Տեսե՞լ ես գյուղը հովտի մեջ մե՛նակ
Յե՛վ շուրջը փոված շքեղ պարտեզներ,
Յե՛վ վոսկի հասկեր և խաղաղ վըտակ,—
Լքսե՞լ ես ֆաղցրիկ արտուտի յերգեր:
Յե՛վ դու տեսե՞լ ես նորա գանձն անգին,
Դեմ՛ֆով հըրեշտակ, հասակը փարքամ
Հարավո դուստրը, հրապույր՛քն աչերին,
Շրթունքը ալ վարդ, ժըպիտն անքառամ...
Սիրատանջ այրված ֆե՛նուշ այտերից
Քաղե՞լ ես համբույր վոր ֆաղցր է մեղրից:

1880

31

Հ Ա Տ Ի Կ

Լույսը բացվում է շուտ արտը գրեմամ,
Պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի.
Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ
Մինչև որերը ամբան արևի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդըս քեզ հետ.
Թե ասված ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդըս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր:

Յե՛վ ջերմ աղոթքով տիրամոր անջև
Յես մում կը վառեմ, յես խունկ կը ծըլտեմ,
Վոր քեզ պարգևե մի առատ անձրև,
Վոր քեզ միշտ սիրով նայե խնդաղեմ:

Բայց քե՛ս այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ
Յես տա՛մ քրտինքը նակտիս արևառ,
Վոր քեզ, իմ հատիկ, ծարավ չըքողենեմ:

Ծըլի՛ր, կանաչի՛ր, վոսկե սավանով
Ծածկի՛ր իմ արտը վողջ ալեծածան,
Նոր այն ժամանակ անուշ շրշուռնով
Տո՛ւր ջարդված սրտիս մի ֆուն հանգստյան:

1886

ԳՅՈՒՂԻ ԺԱՄԸ

Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նազուն, վեր կա՛ց,
Արե՛վն արդեն մայր է մտնում.
Տե՛ս, խաթունն ել գործը պրծած
Փողոցումն է, ժամ է շտպում:

Ժամը տվին — տա՛ն-դո, տա՛ն-դո,
Տեր, փառքդ շա՛տ տա՛ն-դո, տա՛ն-դո...

Շուտով նախիրն հանդից կը գա.
Գրե՛նա՛մ վոր շուտ ելի յես գանձ,
Կովը կքե՛նձ, քը՛ն-քը՛ն կաք տա,
Կովը կքե՛նձ, մեր ցավն հոգանի...

Ա՛խ, Նազուն ջան, չես իմանում—
Նգուց ելի աղան կը գա,
Նորա սիրտը միշտ անկշտում,
Ել ամպի պես պիտի գոռա.

«Շուտով, Գրիգոր, փողերը բե՛ր...—
Ելի չըկա՞. կովըդ հանի՛ր»...
Ա՛խ, Նազուն ջան, այն ի՛նչ բան էր,
Մի՛տդ է հերու... տե՛ր, դու փրկի՛ր:

Հայրիկդ արդեն գրե՛նա՛ցել է
Վոր փող մարի. յե՞րբ պիտի գա,
Տեսնե՛նձ մեկը խղճացե՛լ է...
Ա՛խ, սե՛վ որը տերն ել չըտա:

Շուտով, Նազուն, գընանք ժամը,
Աղոթք անենք. քո ձայնն աստված
Շուտ կըլըսի — այս անգամը
Մեզ չի բողոնի անկով, անհաց...

Բարի մարդիկ միշտ կը լինին,
Հայրիկդ հետը փող կը բերե.
Փողը կըտանք չար աղային
Վոր մեր բիծոն էլ չըլըրե...

Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նազուն, գընանք.
Արե՛վն արդեն մայր է մտնում,
Եզուց տեսնենք, վոր վեր կենանք,
Ի՞նչ նոր արել է մեզ ծագում...

Ժամը տվին — տա՛ն-դո, տա՛ն-դո.
Տե՛ր, փառքըդ շա՛տ. տա՛ն-դո, տա՛ն-դո:

1886

Ամենայն անգամ, յերբ քերելամիտ
Դիպչում է մուսա սրտիս լարերին,
Բնֆուշ մատներով խըլում է ժըպիտ
Յե՛վ դընում քալսի՛ծն իմ անհոգ մակտին,—
Անցած պատկերներ խուռըն յերամով
Լցվում են սիրտըս, գարքնում է հոգիս,
Յե՛վ միտքս հեռու քոչում է սիրով
Նագելի աշխարհն մանուկ որբիս:
Յե՛վ կամենում եմ սեր յերգել միայն
Յե՛վ քաղցրութունը մաքուր հասակի,
Անուշ ժամերը անամպ խնդության,
Կենդանի հրե՛վանք կուսական սրտի:
Բայց միշտ ակամա լարերը բեկբեկ
Տխուր են հնչում որհներգը սիրո,
Ել չե յերելում ինձ սերը յերբեք
Իբրե՛վ վառ գեղմունք յերջանիկ հոգվո:
Յե՛վ միշտ լավում է մի ձայն լարերից,
Վորպես, հառաչանք պաղատող սրտի,
Ել չե հեռանում նա իմ ականջից,
Այդ ձայնն անմեկին մի խորին վշտի.
«Սյնտեղ, ուր արցունք, շղթա և ավեր,
Ուր լավում է լոկ հառաչք լալագին,
Բո՛ւ քընարիցը քող ուրախ ձայներ,
Ո՛վ քշվառ յերգելչ, բնավ չըլավին»...

1887



Մընա՛՛ք բարով, արև, գարուն
Յե՛կ խնկարույր ծաղիկներ,
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչագգեստ բլուրներ․

Մընա՛՛ք բարով, համբույր և սեր,
Դեմքով հրեշտակ կույս չճնաղ,
Վայելչության պայծառ ժամեր,
Քաղցըր ժպիտ, կյանք մատաղ․․

Աղփատություն յես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Յես ինձարըս նըվիրեցի
Վիշտ յերգելու և տանջանք։

1887

ԱՐՏԱՎԱԶԴ

Զարկեցե՛ք, դարբիճնե՛ր, կրռանը սալին,
Զարկեցե՛ք կրռանը—շղթայքն ամրանան,
Անիծյալ արփայի կապանքն ամրանան.
Զարկեցե՛ք, դարբիճնե՛ր, կրռանը սալին։

Ահարկու ամպերը յեկան ժողվեցան,
Ծեր Մասսյաց մակատին սև ֆոլ փաթեցին,
Գոռում է փոթորիկ գազանի նըման,
Հառաչում, սուլում է կատաղած ֆամին։

Զարկեցե՛ք կրռանը․ խորունկ ֆարայրից
Ահա չար հողմի հետ հասնում են ձայներ․․
Յուլացավ փայլակը—արփայի աչքից
Դեպի վեր թռչում են բարկության կայծեր։

Կամի նա յելանել վրեժխնդիր հոգով
Յուր անվերջ տանջանքի բույնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
Բայց ամուր են նորա ծանրը շղթաներ։

Մտերիմ գամփռերը կրծում են կապանք,
Կրծում են անդադար կապանքն արփայի․․
Արտավա՛զդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Յե՛կ դեռ շատ հեռու յե վախճանն աշխարհի։

Յե՛վ անգոր չարութեան քն կուռ հարվածներ
Դեռ պիտի փշրվին մեր մուրնի տակին—
Մենք սպասում ենք դեռ ևս գեղեցիկ քրեր,
Դեռ հաշտ ե յերկինքը մեղսոս աշխարհին:

Բայց յերեք քարացած՝ վենք չենք լսելու
Նոր կյանքի կոչն հուժկու, և վերածնութեան
Մրբարար ավագան մեզ չե փրկելու,—
Արտավա՛զդ, փշրվի քող մեր կուռ կըռան.

Մենք ել չենք զարկելու յերկարի սալին:
Թող կրծեն գամփռերդ վոտփիդ շղթաներ,
Արձակվին բազուկներդ, և դու աշխարհին
Դուրս արի՛ բերելու կոտորած, ավեր... .

Բայց վո՛չ. հավատում ենք դեռ մենք փրկութեան,
Մեզ մի՛ նոր՝ յերկնից նոր լույս կը բացվի,
Յե՛վ տեսնում ենք ահա արդեն ծիածան
Մենք ազա՛տ, լուսավո՛ր մի նոր վիճակի... .

Զարկեցե՛ք, դարբիններ՛ր, կըռանը սալին,
Զարկեցե՛ք կըռանը— շղթայքն ամբանան,
Անիծյալ արքայի կապանքն ամբանան.
Զարկեցե՛ք, դարբիններ՛ր, կըռանը սալին:

1887

Պառկած եր նա ցուրտ մահնում
Յե՛վ լսում եր, քե ինչպես
Դուրսը հողմն ե հառաչում
Յե՛վ մերք լալիս մանկան պես:

Դուրսը մութն եր. կես գիշեր...
Յե՛վ նա հիվանդ, ցուրտ մահնում,
Յերագում եր ջերմ շոգեր
Յե՛վ անձկութեամբ հառաչում... .

1908



Արագն եկավ լափին տալով,
ժեռ ֆարեքին, ափին տալով,
Վա՞րտեղ քաղեմ յես իմ դարդը,
Զոր գլուխս տափին տալով:

Ա՛յ իմ Արագ, ջուրըդ վարար,
Սիրուն յարիս յարար տեսա՞ր.
Յես չըհասա իմ մուրազին.—
Արա՛գ, յարար կարոտս առա՞ր:

Ամպերն եկան Մասիս սարին,
Կարոտ մնացի յես իմ յարին.
Աստո՞ծ սիրես, երված սրտիս
Զուղար բերես եկող տարին:

Գիշերն անհուն գիր կըզըրեմ,
Արտասունքս գետ կըշինեմ.
Արա՛գ, ծեղը ջրիդ չառած՝
Իմ սեվ դարդը քեզ կըբերեմ:

Կասես՝ շողքը ֆարին ընկավ,
Կըբակըն իմ սրտին ընկավ.
Կամար ունից, քուլս աչփիցը
Յավն իմ ջիվան ջանին ընկավ:

Արագն եկավ լափին տալով,
ժեռ ֆարեքին, տափին տալով,
Վա՞րտեղ քաղեմ յես իմ դարդը,
Զոր գլուխս տափին տալով...:

վառֆի յե՛լ, հոգի՛ս, շրթադ բռթափի՛ր,
Աչքդ բաց արա՛, այդ մահվան բռնից.
Թեև մահամերձ, դու մի ձայն հանի՛ր—
Վարդիֆդ ոգնուքյան կրգան չորս կողմից:
1887



Տեսնում եմ ահա—ազգեր են մեռնում,
Ազգեր են ծնվում, և արմավենին
Սուրբ ազատութեան՝ դողդոջուն ձեռքում՝
Բաղդն է մոտենում մատաղ ազգերին:

Յեվ նախնայաց փառքը նոր արշալուսով
Ցոլում է նոցա պայծառ նակատին,
Յեվ ահե՛ղ կռվում արշուն քրտինքով
Վաստակած անմահ առում է դափնին:

Յեվ միայն դու յես, իմ խեղճ հայրենիք,
Վոր շրթայակապ հեծում ես դարձյալ,
Յեվ պատա՛ն պատա՛ն կուրծքդ գեղեցիկ—
Ընկած ես վարպես կենդանի մեռյալ...

Յեվ անցած փառփիդ ավերակներից
Փրկութեան վաստը դեռ չես կանաչում,
Կրծքիցըդ հոսած արյան շիթերից
Քո տանջանքների փունջն է ցողվում:

Բայց, իմ հայրենիք, դու սլտի չմեռնիս.
Յես հավատում եմ հարութեան որիդ.
Մոտ է ժամանակ, գարբի՛ր, սիրելի՛ս,
Փրկութեան աստղը վառվում է նակտիդ:



Յես փառք չեմ ուզում, վռսկի չեմ խնդրում,
Յե՛վ վոչ վայելքը ունայն աշխարհի.
Պսակն հաղթուքյան յես քեզ եմ բողնում,
Արյունով սքնված հզորքդ յերկրի...

Ա՛յս, ինձ մի յերա՛գ, վո՛չ մեր սին կյանքի
Անմիտ ցնորքը փոքրիկ կրֆեքով,—
Մի չնաշխարհիկ յերազ հրաշալի
Ազատ, անսահման, անշեջ զգացմունքով:

Վար և ատելը լինի կատարյալ,
Ինչպես և սերը ազատ, անվախճան,
Վար իմանաս թե՛ կարող եմ զգալ
Յե՛վ խորիկ ինչպես եյակ բանական—

Վար իմանամ թե՛ վարդգեղ շրթունքիդ
Մեղքի հետ մի տեղ յես թույն չեմ ծծում,
Թե՛ յերգը բոլսած կենդանի սրտից
Գուժկան շղթային շաչյուն չե դառնում:

1887



Անցի՛ր, սե՛ ամպ, դու իմ սրտից.
Բացվի՛ր, յերկի՛նք կապուտակ.
Տխուր, խավար թուխպի միջից
Յոլա՛, գարնան արեգա՛կ:

Թող պատավի այս ցուրտ ձմրան
Սգո հանդերձ տաղկալի,
Յե՛վ շողշողա մանուկ բուռքյան
Վռսկե ժպիտ ցանկալի:

Յե՛վ բերկրուքյան արտասուքներ
Այս լեռներից թող հստեն.
Թարմ կանաչին ջինջ առվակներ
Վաղցր ավետիք թող խոսեն,

Թե մայր յերկիրն ազավեցավ
Յուր կուռ, ճնշող կապանքից.
Նոր ցնծուքյան յերգ լավեցավ
Չեք արտուտի բերանից...

1888

Քայց... մոռայեցալ յերեսը գետին.
«Իմ բույր, յերբայրն եր այն ակն ու վտակ»—
Գռչեց, զարկվեցալ սարսած ափերին
Ու հառաջ անցալ կռակ առ կռակ:

1895

Հեզիկ կարկաչով վագում են ալիք,
Փարում, փայփայում ափերը կամաչ.
Ջրերի վերա կախված ուռննիք
Նոցա հետ խոսում են լալսառաչ:

«Մի՛ վագեք, ալի՛ք, կացե՛ք, կռակներ.
Մի՛ քողնեք չքնաղ այս վայրն հանգստյան
Յեկ վայելեցե՛ք ֆաղցրության ժամեր,
Մինչ ժպտում ե ձեզ շողն արեգական:

«Ա՛յս, դուք չեք տեսնում, կանցնեք այս բուր—
Յեկ կը պղտորի ձեր ջուրը վնիտ.
Այնտեղ այլ յերկիր, ա՛յլ ափեր տխու՛ր,
Այնտեղ կը գրկե ձեզ արյան հովիտ:

«Այնտեղ հողն արյուն, արյուն են սարեր,
Ջինչ աղբյուրներն ել կտրել են արյուն.
Վտակը քերում արյունոտ ֆարեր,
Քառամեցնում ե ծաղկավառ գարուն:

«Դողում ե յերկինք սրի շաչյունից,
Մքնել են՝ վոսկի արևի շողեր.
Վա՛հ, մի՛ հեռանա, սիրո՛ւն գետ, մեզնից.
Մի՛ վագեք, ալի՛ք, կացե՛ք, կռակներ»...

Մ Ա Յ Ր Ս

Հոգեմաշ ցավով ամենայն գիշեր
Յես ֆուն եմ մտնում արտասուքն աչքիս,
Յեկ խունն յերամով տանջող պատկերներ
Շուտ պաշարում եմ տառապյալ հոգիս...

Մենակ ապրեցա, կարոտ զգվանքի,
Փորձով յես ուսա խորհուրդը կյանքի,
Որքս սևացավ այրող կրքերից,
Զբզբսա յերբեք մի սիրտ կարեկից:

Յեկ ֆուն եմ մտնում ամենայն գիշեր
Արտասուքն աչքիս, հոգեմաշ ցավով—
Հանգիստ չեմ տալիս սև սև պատկերներ,
Վոր պաշարում եմ ինձ խունն յերամով...

Յեկ ահա դու յես, վար ինձ այդ պահուն
Յերևում ես, մա՛յր, պսակով զարդարուն.
Իու գրկում ես ինձ սիրով կաթոցին,
Գոչում ես՝ «վա՛րդի» ձայնով անմեկին:

Շեկ տեսնում եմ յես քո փշյա պըսակ,
Խոցերով ծածկված քո սիրուն մակատ,
Յեկ մի քափանցիկ հուրք շղարշի տակ՝
Կուրծքիցդ հասող արյունը կաթ-կաթ:

Աչքդ աղերսալիք տեսնում եմ վերաս:
Կանչում եմ քեզ «մա՛յր» յես ձայնով ճրվագ,
Յեկ կրկին յեյնում անֆուն, վշտահար—
Ա՛խ, մա՛յր, ի՞նչ անե վորդիդ քեզ համար...

ՍԱՐԵ Ի ՎԵՐ

Դեպի վե՛ր, դեպի վե՛ր... Անվերջ ե ուղիս,
Հոգնեցան բազուկներս՝ այս կովումն անգոր,
Սպառեցավ և վերջին ույծն ել ծնկներիս—
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, քաջասիրտ զինվոր:

Ավելի կարծրանան թող այս սև ժայռեր,
Ավելի թող սպառնա անդունդն ահավոր,
Դեռ շունչ կա բերանումս, շարժվում եմ ձեռքեր--
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, ո՛վ արի զինվոր:

Դեռ հեռու յե կատարն անամպ ու հստակ,
Բայց յեքե չհասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն ե հաղթանակ—
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհեր զինվոր:

1896



Հավատում եմ—մեռնելու չե սուրբ գաղափար,
Յեվ անմահ ե, վոր մեռնում ե նորա համար.
Հավատում եմ—չկա վոչինչ հավերժական,
Բայց սուրբ գործի ույծը դյուր-իչ՝ չունի՛ր վախճան:

Մի վհատի՛ր, հառաջ գրնա՛, անբա՛ղդ յեղբայր.
Թող խորտակվի բաց ովկիանում նավդ հողմավար,
Թող գայրանա գլխիդ մրրիկ ահեղաշունչ
Յեվ մոլեգին կլանե հորձանք դիդ անմահունչ...

Բայց հավատա՛, դու չես հաղթված, վոչ ույծն
հաղթող—
Յեվ նոր քաջեր կելենն անշուշտ քեզ հաջորդող,
Յեվ կը գրավեն նոքա այն ափը ցանկալի,
Յեվ նոր այնտե՛ղ փայլը փառքիդ կը բորբոքվի:

Թող ավերվի հայրենի տունն հիմնահատակ,
Բայց քանի հուրն առկայծում ե դեռ մոլորի տակ,
Նորա կորուստն, վո՛հ, մի՛ վողբալ դու սգավոր—
Իբրև փյունիկ նա կը հառնե անշուշտ մի որ...

1896

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Քեզ ըսպատող չըմբնաց,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն.
Գովքդ ասող չըմբնաց,
Զուր ես գալի, ա՛յ գարուն:

Սև-մուր պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեզ վայ բերեց ես տարին—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:

Բյուրբյուրը գա՛ քող ձեն տա,
Ել ո՞վ պիտի քեզ խնդա,
Ել վո՞ր սիրտը կը քնդա—
Զուր ես գալի, ա՛յ գարուն:

Բյուրբյուրն յեկավ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կա՛ գարդ չունի—
Ել ո՞վ ա վոր դարդ չունի—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:

Դու յետ բերիք հավքերին,
Վա՞նց տեր ըլնեն բլներին,
Սա՛ղ տեղ չկա մեր յերկրին—
Զուր ես գալի, ա՛յ գարուն:

Աշուղի բերանը փակ,
Սագ-ֆյամանչեն փակի տակ,
Սիրտն ա երվում անկրակ—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:

Քեզ ըսպատող չըմբնաց,
Զուր ես գալի, ա՛յ գարուն.
Գովքդ ասող չըմբնաց—
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:

1897



Գարնան կարկաչուն վտակի ափին
Մոլորված մտքով յես նստած էյի
Յե՛վ նայում էյի պղտոր ջրերին,
Պեսպես ցավերով տանջված սիրտըս լի:

Յե՛վ վունջը ճեղիս քրքրում էյի,
Ծաղիկներն մեկ մեկ ջուրն էյի ձգում,
Յե՛վ պղտոր այի՛ք գարնան վտակի
Միշտ հառաջ էյին անդարձ գլորում...

Յե՛վ աչքըս ջրին՝ ասում էյի յես.
«Կյա՛նք, դու ել մեկ մեկ որերս ինձանից
Խլում ես պղտոր այդ վտակի պես:

Ինչպես ծաղիկներն իմ փնջի միջից՝
Անհետանում են անուշ յերազներ—
Մի՛րս իմ, դրախտ էյիք, և դարձար ավե՛ր»:

1897

Ս. Շ Ա Ի Շ

Արևը վերջին անգոր շողերով
Վտակեցածում է կատարը լեքան.
Կանգնած է անշարժ անտառն անխոռով.
Չե լսվում արդե՛ն հավաղը ծիծուհն...
Չորս կողմս եմ նայում. տեսնում եմ անս
Յերբեմն միայն մի տերև դեղնած
Գլորվում է տխուր ցուրտ գետնի վերս,
Լսվում է նորս շրշյունը մարած:

Ա՛խ, այդ վայր քափվող դեղին տերևներ
Մի՛րսս են գրավում անտրսունջ վողրով.
Ինձ պաշարում են տխուր յերազներ,
Միտքս յերկբայությամ սեռվում է ամպով.
Ին ծոցն եմ ձգտում, ո՛վ մայր—բնություն,
Կամի՛մ հաղորդվիլ քո լուռ հանգստյան
Վսեմ խորհրդին. չե՞ կը գա գարուն—
Կրկին կըփայլիս ծպտով մանկական...

Ինչո՞ւ կարող ես դու մահու քողով
Ծածկվիլ ու քնանալ անշուք ու լռիկ
Յե՛վ հառնել դարձյալ, յերբ յուր ջերմ շողով
Խաղա մակատիդ արևը գողտրիկ:
Իսկ մեզ՝ վոր չունինք գգվանքը կենաց,
Գրկում է շիրիմն անդարձ, հավիտյա՛ն,

Յե՛վ մեր անավոտ, վշտով անցուցած,
Անվերջ գիշերում առնում է վայելում...

Բայց սիրում եմ քեզ, հանգչո՛ղ բընություն,
Դու մի ա՛յլ մահվան հանդերձ ես զգեցում.
Յե՛վ իմ մեջ ուժգին յեռում է արյուն,
Յերբ այդ սգավոր պատկերդ եմ տեսում...
Զգում եմ բերկրած, գարո՛ւնդ հիշելով,
Վոր այդ ցնորք չե, կա անմահություն...
Յե՛վ գիրկդ եմ ընկնում, հոգիս անխոռով,
Քե՛զ կամիմ միանալ, ով մայր բընություն:

1892

ՎՈՒՍՍՎՈՐՁԻ ԿԱՆԹԵՂԸ

Անցավ, յեղբա՛յր, մեր պարզամիտ մանկություն
Ել հրաշքների չենք հավատում մենք վաղուց.
Յե՛վ մեր աչքում չունին այլ ևս թավչություն
Ավանդ հասած առասպելներն հինավուրց:

Բայց մի գրույց, վոր սրբության դրոշմով
Դարե ի դար հասել է մեզ պապերից
Յե՛վ իբրև գանձ նվիրական խնամով
Պահպանվել է մոռացության ավերից,
Միշտ սրբագան ակնածության մի զգացում
Յե՛վ վեհ խոհեր հարուցել է իմ հոգում:

Ամեն անգամ յերբ վերջալույս ծիրանի
Հանգչում է մեզմ Արագածի կատարին,
Յե՛վ գերդ մանկան պայծառ աչքեր գեղանի
Ասողներն յերկնից փայլ են տալիս կամարին,
Նայում եմ յես և ըսպասում, վոր վառվի
Մի այլ մրազ ծերուկ լերան մակատին:

Վոչ բնության ստեղծված է այն հրաշալի
Յե՛վ վոչ կերտված հարտարարվեստ մարդկային,
Այլ մի ուրիշ չնաշխարհիկ գարության,
Արարչության խորհրդավոր մի գաղտնիք.
Այն մեր հոգու լուստ ջահն է նվիրական,
Վողջույն ազգի կենդանության յերաշխիք:

Յե՛վ այդ մրազն, յեղբա՛յր, անշեջ կլինի,
Քանի վառող Աչն է մեզ միշտ հովանի:
1903



Այագյազ բարձր սարին
Ձին ա կիտվել կատարին.
Սարի ճամբեք, բաց ելե՛ք,
Եթամ, հասնեմ իմ յարին:

Ա՛յս, իմ ճամբեն քարոս ա,
Սիրոս երված, յարոս ա.
Ղարբբի որն ըլնի սև,—
Ազիզ յարի կարոս ա:

Յարիս տեսա, լալիս եր,
Լալիս, գլխին տալիս եր.
Համբա տվե՛ք, ա՛յ սարեր,
Ձեռով արի՛ գալիս եր:

Են ի՞նչ դուշ ա են քարին...
Սիրոս կաթում ա արին,
Ա՛յ իմ քառլան, քև տուր ինձ,
Թունեմ, հասնեմ իմ յարին:

1901



Ա՛յ վարդ-աղջիկ, մոտ արի՛,
Քեզ եմ կանչում, մոտ արի՛,
Նազո՛ւ աղջիկ, շե՛կ աղջիկ,
Քեզ եմ կանչում, մոտ արի՛:

Վարդերի հետ խաղում ես,
Յերեսիս ծիծաղում ես,
Երված սիրտըս քաղում ես—
Քեզ եմ կանչում, մոտ արի՛:

Աչքը ծով, ունքը կամար,
Աղջի՛, սիրտըս ո՞ւր տարար.
Բյուրբյուր դառա քեզ համար—
Քեզ եմ կանչում, մոտ արի՛:

1908

Ս.ՐԾԻՎՆ ՈՒ Ա.ՐՏՈՒՏԸ

Արծիվը կանգնած սև ժայռի գլխին
Հանգիստ ու հպարտ նայում է չորս դին.
Ցածն ամպեր ներմակ լողում են ձորում,
Վերևում վնիտ յերբերն է ծորում:
Յե՛վ ճյուղագագաք լեռների արքան
Չորս դին է նայում, ասում ինքն իրան.
«Ինձնից բարձր ե՛լ ո՞վ կարող է սլանալ,
Այս վեհ բարձունքին ինձ պես տեր դառնալ»:

Հանկարծ յերկնքի անհուն կայույտից
Անուշ ճովողյուն հնչեց բերկրալից:
Արծիվն ահավոր նայեց դեպի վեր,
Տեսավ՝ ու՛յժը չե աշխարհին միշտ տեր.
Արտուտը փոքրիկ մինչ յերկինք հասած,
Արևի վասկի փայլովն վողողված,
Գովքն եր գեղգեղում կենսաբեր գարնան,
Մահամերձ յերկրի որհներգն հարուբյան:

1904

Վ.Ա.ՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Յերկնեց յերկին և յերկիր,
Յերկնեց և ծով ծիրանի,
Յե՛վ յեղեգնիկը կարմիր,
Յերկնեց ծովում ծիրանի:

Ծուխ է դուրս գալիս յեղեգան փողից,
Բոց է դուրս գալիս յեղեգան փողից.
Բոցն է պատել կարմիր յեղեգնիկ,
Բոց է դարձել և ծով ծիրանի.
Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ,
Վահագն ահա՛—մանուկ գեղանի:
Բոց մորուհով,
Հուր շրթունքով
Հուր հեր գլխին—հրեղեն պսակ,
Յե՛վ աչերն են գույգ արեգակ:

Այծուսի ծովի ծիրանի արև,
Գնում են գալիս, ծեծում են փունք.
Ահեղամուռնի գոռում է մանկիկ,
Սաստում է այլացն հրավառ շրթունք:
Վահագն ծնավ, լոնցե՛ք, ալի՛ք.
Դու ծովահալած, դադար ա՛ռ, մրրի՛կ:
Թևերն վոսկեհուռ, հրակեր բաշով
Նծույզը տակին՝ սլացավ վերև—
Յերեսը ծածկի՛ր համեստ շղարշով,
Տե՛ս, ո՞վ է գալիս, և դու, հո՛ւր—արև.

Գլուխդ ալևոր, փաջածի՛ն Մասիս,
Դու ել խոնարհի՛ր, վահագն ե գալիս:
Յերկինք ու յերկիր և ծիրանի ծով
Ավետում են քեզ, ցավերի դու ծով՝
Յնծա՛, բյուրվիշապ Հայաստան աշխարհ
Փրկուքյան արև վահագնիդ տեսար:

1904

Լուսնակ գիշեր, անհուն գիշեր
Դարդիս հետ եմ յես մեռակ.
Սև յերագներ, սև-սև հուշեր
Հոգիս արին ավերակ:

Ում վոր յեղբայր անվանեցի,
Ինձ քշնամի իմացավ,
Յե՛վ յես ամուր պատանեցի
Շիրիմ-սրտումս իմ սև ցավ:

Ա՛խ, և մեռել, և կենդանի՝
Վոչ յեղ ունի, վոչ վախճան.
Դարդս ել ուրիշ անուն չունի—
Այանքիս ընկեր սերածան:

1908



Ա՛խ, իմ անո՛ւշ, վռսկի՛ որեր,
Յերազի պես դուք անցաք.
Ինչպես տավղի քննուշ լարեր
Ձայն տվեցիք ու անցաք:

Հանգավ իմ խանդ, սեր ու ավյուն,
Միրտըս քոշնեց գերդ ծաղիկ.
Խլեց ինձնից մուսյլ աշունն
Իմ անուրջներ գեղեցիկ...

Ու միայնակ, որ ու գիշեր,
Վիզըս ճըկած բռնիս տակ,
Ձեզ եմ հիշում, անո՛ւշ որեր.
Ա՛խ, այս ի՛նչ շուտ դուք անցաք:

1908



Լուս կա՛ց, սի՛րս իմ. այս աշխարհում
Դարդ իմացող չես գտնի.
Մեզ պեսներին ջուրն է բերում,
Ջուրն էլ մի որ կտանի:

Գետի յերեսն ընկած տաշեղ՝
Մենք գնում ենք հա առաջ.
Հանգիստ չունինք և վոչ մի տեղ,
Լսող չկա մեր հառաչ:

Լուս կա՛ց, սի՛րս իմ. ուրիշներին
Ափսոս է մեր ցավն հայտնենք.
Դարդն ընկեր է մեզ անմեկին,
Մինչ գերեզման կը տանենք:

1904

Ապրել ու տանջվել, ապրել ու տոկալ,
Լռիկ, միայնակ, անհույս, անխնդում,
Միշտ ել հալածված բազդից վախակալ,
Գեբի՛ աշխարհումս, ինչպես մուք բանտում...

Որեցոր հալվում մեղրամոմի պես,
Հատնում են ույծերս, և խանդ, և ավյուն.
Մանուկ իզձերիս եմ կարտում յես,
Ել բացվելու չե ինձ համար գարուն:

Յե՛վ սիրտըս, վոր մի տավիղ՝ եր անուշ,
Հնչում եր վորպես կարկաչուն աղբյուր,
Ա՛խ, այստք բեկբեկ լարերը քննուշ,
Մահու դրոշմով լռել է տխուր...

1911

ՅԵՐԳԻՍ ՀԵՏ ՄԵՆԱԿ

Быть без людей, быть одному...
B. БРЮСОВ

Յերգիս հետ մենակ, յերգիս քեկերով
Թռչեմ, վերանամ
Յերբերքը հատակ, խորունկ ինչպես ծով,
Թռչեմ, վերանամ:

Հեռու աշխարհից, ջինջ կապույտի մեջ
Լողա իմ հոգին.
Ազատ ու անբիծ յերազով անվերջ
Լողա իմ հոգին:

Յես լռ՛ւյս եմ ուզում, լույս սըվե՛ք ու սեր
Գեք յերազիս մեջ.
Իմ սուգն անպատում, սգերգիս քեկեր
Գեք յերազիս մեջ...

1916

Յ Ա Ն Կ

	62
Յերկու խոսք	5
Աչուղ	13
Ո՛վ իմ խղճուկ կյանք	15
Կուզեյի լինել կարկաչուն վտակ	16
Վորպես հաղթանդամ մի ծերուկ հսկա	18
Ավերակ	20
Ա՛խ, ավե՛ք ինձ	21
Գեղեցիկ որեք	23
Սյունյաց իշխանը	25
Տեսե՞լ էս արդյոք	31
Հատիկ	32
Գյուղի ժամը	33
Ամենայն անդամ	35
Մընա՛ք բարով	36
Արտավազը	37
Պառկած եր նա	39
Արազն եկավ	40
Տեսնում եմ ահա	42
Յես փառք չեմ ուզում	44
Անցի՛ր, սե ամս	45
Հեղիկ կարկաչով	46
Մայրս	48
Սարն ի վեր	50
Հավատում եմ — մեռնելու չե	51

Նոր դարուն
Գարնան կարկաչուն
Աշուն
Լուսավորչի կանթեղը
Արդյազ բարձր սարին
Ա՛յ վարդ-աղջիկ
Արձիվն ու արտուտը
Վահագնի ծնունդը
Լուսնակ դիչեր
Ա՛խ, իմ անուշ
Լուս կա՛ց, սիրտ իմ
Ապրել ու տանջվել
Յերգիս հետ մենակ


62
52
54
55
57
58
59
60
61
63
64
65
66
67

Պատ. խմբագրի՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագրի՝ Ստ. Ալբուկյան
Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան, Վ. Ավագյան



Գլավիտի լեզուր՝ Վ—2243. Հրատ. 5024.
Պատվեր 720. Տիրաժ 4000.
Թուղթ 72×110. Տպագր. 4 մամ.
Մեկ մամ. 27648 նշան.
Հանձնված է արտադրության 2 սեպտեմբ. 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 22 սեպ-
տեմբ. 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0350070

39450

39450